ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի հուլիսի 1-6-ը Ֆրանսիայի Հանրապետություն պատվիրակության գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձինք՝ Սուրեն Քրմոյան, Արևիկ Անափիոսյան, Սիրանուշ Սահակյան, Դավիթ Մելքոնյան, Մարիամ Գալստյան

Գործուղվող անձի զբաղեցրած պաշտոնները՝ ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ, ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ, Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի նախագահ, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ, ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի հակակոռուպցիոն և քրեակատարողական քաղաքականության մշակման վարչության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման բաժնի պետ

Գործուղման վայրը և ժամկետները՝ հուլիսի 1-6, Ֆրանսիայի Հանրապետություն

Հրավիրող կողմը՝ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն (ՏՀԶԿ)

Գործուղման նպատակը՝ ՏՀԶԿ Ստամբուլի հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մշտադիտարկման 19-րդ հանդիպմանը մասնակցություն, Հայաստանի վերաբերյալ 4-րդ փուլի գնահատման զեկույցի քննարկում

Քննարկված թեմաները՝

1. Հայաստանի 4-րդ փուլի գնահատման զեկույցի նախագծի առանձին գլուխների և Հայաստանին տրվող նոր հանձնարարականների վերաբերյալ բանակցությունների իրականացում, զեկույցի ներկայացում և քննարկում:
2. Ղրղզստանի, 4-րդ փուլի գնահատման, Ուկրաինայի ոլորտային գնահատման զեկույցների ներկայացում և քննարկում:
3. Ղազախստանի, Տաջիկստանի, Վրաստանի, Ադրբեջանի, Մոնղոլիայի, Ուզբեկստանի առաջընթացի գնահատման զեկույցների ներկայացում և քննարկում:

4. 2017 թվականի գործողությունների ծրագրի արդյունքների ներկայացում:
5. Հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի ֆինանսավորման ռազմավարության ներկայացում և քննարկում:
6. Գնահատման մեթոդոլոգիայում փոփոխությունների կատարման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում:
7. Կրթության ոլորտի գնահատման մեթոդոլոգիայի ներկայացում և քննարկում:
8. «Տեղական ինքնակառավարման մարմիններում կոռուպցիայի կանխարգելում», «Դատախազների անկախություն» խորագրերով թեմատիկ ուսումնասիրության ներկայացում և քննարկում:
9. Հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի անդամ պետությունների կողմից իրականացված հակակոռուպցիոն բարեփոխումների ներկայացում:
10. 2018 թվականի աշխատանքային ծրագրի ներկայացում և քննարկում:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

ՏՀՀԿ Ստամբուլի հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մշտադիտարկման 19-րդ հանդիպման ընթացքում գնահատվել է 3-րդ փուլի գնահատման արդյունքում Հայաստանին տրված հանձնարարականների կատարման վերջնարդյունքը և դրա հիման վրա կազմված Հայաստանի վերաբերյալ 4-րդ փուլի զեկույցը: Ընդ որում, ՏՀՀԿ 4-րդ փուլի գնահատումը մեկնարկել էր դեռևս 2017 թվականի հոկտեմբերի 30-ից: Գնահատումը բաղկացած էր մի քանի փուլերից, այդ թվում՝ հարցաշարի լրացում, ՏՀՀԿ մոնիթորինգային խմբի այց Հայաստանի Հանրապետություն՝ տեղում իրավիճակը գնահատելու նպատակով, լրացուցիչ հարցաշարի լրացում, զեկույցի նախագծի վերաբերյալ կարծիքների ներկայացում, զեկույցի հաստատում: Միաժամանակ, նոր զեկույցի շրջանակներում Հայաստանին տրվել են հանձնարարարականներ՝ հետագա 3 տարիների համար:

Պլենար նիստի ընթացքում քննարկվել և հաստատվել են այլ պետությունների գնահատման և առաջընթացի զեկույցները, առաջարկություններ են ներկայացվել գնահատման մեթոդոլոգիայի, տարեկան ծրագրի, հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի ֆինանսավորման ռազմավարության, ներկայացված թեմատիկ ուսումնասիրությունների վերաբերյալ:

Հայաստանի մասնակցության արդյունքները

2018 թվականի հուլիսի 1-6-ը Փարիզում տեղի ունեցած ՏՀԶԿ Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի հակակոռուպցիոն ցանցի հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի պլենար հանդիպման ընթացքում գնահատվել է 4-րդ փուլի գնահատման արդյունքում կազմված Հայաստանի վերաբերյալ զեկույցը: Հայաստանի պատվիրակությունը՝ կազմված՝ ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Սուրեն Քրմոյանից, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դավիթ Մելքոնյանից, Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի նախագահ Սիրանուշ Սահակյանից, ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ Արևիկ Անափիոսյանից, ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի հակակոռուպցիոն քաղաքականության մշակման բաժնի պետ Մարիամ Գալստյանից, ներկայացրել է Հայաստանի արձանագրած ադյունքները կոռուպցիայի դեմ պայքարում: Միաժամանակ, հանդիպմանը ներկա հայաստանյան հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները ներկայացրել են քաղաքացիական հասարակության տեսակետը զեկույցի նախագծի և կոռուպցիայի դեմ պայքարում իրականացված քայլերի վերաբերյալ: ՏՀԶԿ գնահատող խմբի կողմից հատուկ ուշադրության և գնահատանքի է արժանացել վերջին ժամանակահատվածում կոռուպցիոն դեպքերի բացահայտման արդյունա-վետությունը: Պատվիրակության այցի և երկարատև բանակցությունների արդյունքում արձանագրվել է, որ Հայաստանին ներկայացված և այս փուլում գնահատվող 21 հանձնարարականները կատարվել են, ընդ որում, 3-ը՝ ամբողջությամբ, 8-ը՝ մեծամասնությամբ, 10-ը՝ մասնակի: